Գլուխ Գ

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սանահնի վիմական արձանագրություններն առաջին անգամ ընդօրինակվել են վանքի «Քոթուկ» կոչվող մատյանի մեջ։

Դա վանքի պաշտոնեության կողմից տարբեր ժամանակներում գրված մի ձեռագիր մատյան է, որ ծառայել է գործնական նպատակների։ Նրա մեջ ամփոփված են վանքի հիմնադրման, նրա ունեցած և ձեռք բերած կալվածքների և պատմության վերաբերող կարևոր համարված բազմաթիվ տեղեկություններ՝ քաղված հին հայ մատենագրությունից, վիմական արձանագրություններից, թագավորական և իշխանական հրովարտակներից, կալվածագրերից և այլն։ Մատյանի վերջում կան բազմաթիվ մաքուր թղթեր՝ հետագայում գրելու համար։ Այսպիսի Քոթուկներ ունեն այլ վանքեր ևս (Սաղմոսավանք, Լիմ, Կտուց անապատներ և այլն), որոնք նույնպես նյութեր են պարունակում իրենց վանքի պատմության և կալվածքների մասին։ Այդ Քոթուկների հրատարակությունը կարող է շատ արժեքավոր նյութեր տալ պատմաբաններին, տնտեսագետներին և շատ ուրիշ մասնագետների։

Սանահնի «Քոթուկը» բազմաթիվ այլ ձեռագրերի հետ վանքի միաբանները Աղա Մուհամեդ խանի արշավանքի ժամանակ թաղցրած են եղել վանքի մոտի քարայրներից մեկի մեջ։

Այդ մասին «Քոթուկի» 1 բ էջում Հովսեփ արքեպիսկոպոս (հետագայում կաթողիկոս) Արղությանը գրում է.

«Թիւն 1797 յամի տեառն և հայոց ՌՄԽԶ, յապրիլի 10, ես՝ Յովսէփ արքեպիսկոպոս Սանահնեցի, որդի Շիօշբէգին, երկայնաբազուկ Արղութեանց, յազգէ իշխանացն Զաքարիա Ամիրսպասալարին, ծայրագոյն նուիրակ սրբոյ աթոռոյն Էջմիածնի, առաջնորդ Ռուսաց երկրի ամենայն հայոց ազգին և հիմնադիր Նոր-Նախիջևանու և Գրիգորիապօլսու։ Մինչ ընդ հզօր զօրացն եկի ի հայրենի երկիրն իմ ի Թիֆլիզ, յետ աւերութեան նորին, առաքեցի զսանահնեցի Մուրադենց Առաքել վարդապետն ի Սանահին, վասն որոնելոյ գրեանց ի յայրս նորին բացեալ Աջառաց այրն։ Ընդ բազում գրեանց և զանգակաց գտեալ էր և այս Քեյրուկ գիրքս, որ ունի զօրինակքս ամենայն հարկաւոր թղթոցն նոյնոյ վանիցն։ Հետևելով նախնեացն շաւղաց և ես յայլ ուրեք գրելոց եմ ի սմա զոր նուիրեցի սոյն վանիցն»։

«Քոթուկի» մեջ ընդօրինակված են մեր ժողովածուի 12, 28, 29, 30, 186, 187 արձանագրությունները։

Մեր ունեցած տեղեկությունների համա-